

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ENCYCLOPEDIÉ

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 5

1898 ԱՊՐԻԼ 4

Ամէն ճեղի համար Տառեկան կանխիկ 50 դահ: Վեցամսեայ 25, իսկ եռամսեայ 13 դահ: Օտար երկրաց համար Տառեկան կանխիկ 15 ճրանի: Թղթատարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Դաւաններէ բօսքի բով ալ կ'ընկաւնուի 100 դրուցի ճեղ 110 դրուց:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Վ. Գ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆ ԳՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՋՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ — Ստուգարանական բառարան Բ:
ՊԼՈՒՋ — Երկրագործական ճարտարարուեստներ:
Վ. ԶԱՐԴԱՐԵԱՆ — Անկախ դործի հետեւանք:
ՔԱՐՈՂ — Կարմիր հաւկիթը, (Զատիկի վէպ):
Ղ. ԲՈՂԱՏ — Առտնին կենդանարանութիւն — Մլուկը:
Ղ. ԲՈՂԱՏ — Պանրագործութիւն (Շար):
Ղ. ԲՈՂԱՏ — Պարտիզպաններու համար — Խլուրդ Բ. (քէօթէպէկ):
ԱՐԱՔՍ — Առտնին առողջարանութիւն — Առանց ստակի լաւ փոշի մը
ակռայ մաքրելու համար: — Մորթի ճեղքուածի դեղ:
ԱՐԱՔՍ — Առտնին տնտեսութեան յառաջ եկած կտակ-
ներու բիծերը մաքրելու համար: — Իւղոտ շիշերը մաքրելու հա-
մար:
ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՍԼԱՏԱՍԽԱՆՆԵՐ:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՑԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԽԻՐ

اختر مطبعه — ابوالسود جاده سنده نمره ٥٤

ՀԱՒԱԳԻՉ-ՄԱՍՆԱԳԵՏ
ԳՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ
ՊՕՂՈՍ Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

Ձագմագճըլար Խօզուեալ, Թիւ 37

—→→→→→

1. Գնումներ կ'ընէ ամեն տեսակ յար-
 գի եւ հազուագիւտ (rares) բույսերու,
 մանաւանդ արեւելեան դրոշմաթղթերու
 որու հաւաքիչը եւ մասնագէտն է:

2. Իր չունեցած բույսերուն համար ե-
 թէ ուզուի փոխանակութիւն ալ կ'ընէ
 դրոշմացուցակի (catalogue) գիներու հա-
 մեմատութեամբ:

1—20

ՁԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պօլիս, Ձագմագճըլար Բիւ 50

Հետեւեալ գրքերուն համար յարգոյ ետա-
 րակութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ

	Զրուշ
Ժողովածոյ	120
Շարական	100
Բուն տօմար	100
Խիկար Պարոնեանի Ա. եւ Բ. չիջան	80
» » Գ. » »	80
Բանասէր Թերթ Հիսարեանի Ա. »	80
Ընթերցասիրութիւն Չօրայեանի	25
Աւանին տնտեսութիւն »	15
Նարեկ հին տիպ. մեծգիր	27
Տրամաբանութիւն Ֆիզիքա Պօղոս	
Պատուելիի	10
Երեւակ հանդէս Տէրոյեանցի 1 տրիւն	25
Մանկութիւն երեւելի արանց	6
Դիւցազունը աշխատութեան	18
Մարգարիտ արքայութեան երկնից	7
Խաչի ճառ	5
Ձայնագրութիւն սոփրելու համար	
Տաճկերէն Նօթա մուալլիմի	12
Երկրագունտ հանդէս Ա. տարի (Ա.	
թիւը պակաս)	10
Նոյն Բ. տարի ամբողջ	15
» Գ. » »	15
» Գ. » »	40
» Ե. » »	40

Ու հետզհետէ Հանքէթի միջոցաւ պի-
 տի ցոյց տանք մեր ընթերցողներուն գըր-
 քեր՝ որոնք թէեւ չառոնց ապուտծ ըսց-

միշտ նոր կը մնան եւ արդարեւ ալ գրա-
 կան արժէք ունին:

Գաւառներէ բօստի բուլ ալ կ'ընդու-
 նուի, եւ առանց բօստի ծախքի կը շըր-
 կենք սոյն գրքերը:

Կարեւոր գնումներու մասնաւոր զեղջ:

Նոր հրատարակութիւն ԱՅԲԵՆԱՐԱՆ,
 պատկ. երես 24, գին 20 փարա: Հեղի-
 նակ Կ. Վ. Պալապանեան: Հրատ. Մա-
 մուրեան Գրատան Զմիւռնիա:



ՀՈՆԿ-ԲՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ. ՊՈԼԻՍ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՐԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ձեռք պէյ Խանի դրամ կից, Թիւ 10

Աստիճան լաւ թէյերու ամենէն ընդար-
 ձակ վաճառատունը Կ. Պօլսոյ մէջ, որ
 ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կող-
 մերը: Գաւառներու յանձնարարութիւն-
 ները փութով եւ խնամով կը կատարուին:

Զինական, Հնդկական, Ճապոնի եւ Սէյ-
 լանի էն ազնիւ թէյերէն ուղղակի բեր-
 ուած, կը գտնուին հոն:

Զգուշանալ սոյն վաճառանիշին կեղծե-
 րէն:

Փնտուել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
 Ստորագրութիւնը:

ՀԱՒ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԽԻՍՏ ԿԱՐԵՒՈՐ

Կ'ուզէք կատարեալ գիրք մը ունենալ,
 հաւարուծութեան համար. գնեցէք Զար-
 դարեան Գրատունէն «Թավուգ Պէսլէմէք»
 անուն գիրքը:

Գինը 3 զրուշ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

ENCYCLOPEDIE

(مجموعه علوم)

Բ. ՇՐՋԱՆ

5

1898 ԱՊՐԻԼ 4

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրությանը իր գրքին վրայ իր յատուկ տեսութիւն-
շնորհակալիքը կը յայտնէ անոր հետեւեալ տեղումը պարզէր իր հասկցած կերպով.
որոնք կը շնորհաւորեն թերթին նոր
Խմբագրութիւնը, եւ շնորհակալու-
թեանց հետ իր շնորհաւորութիւննե-
րը կը ներկայացնէ իր Ազնիւ ընթեր-
ցողաց և ընթերցողուհեաց Ս. Զատիկի
տօնին առթիւ:

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Տ. ՅՈՎՀ. Ա. ՔԶ. ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ

Բ.

Դրքին սկիզբը դրուած Զօնին մէջ,
Հիւնքեարպէյէնտեան կը յայտարարէ
թէ իր երեւոյթեայ գիտութեանց որոնք կը
նստին ի պարթաւս գիտական եւ ի
լարբացումս գիտական գաղափարներու: Այսպէս
ահա իր օգտակար հանդիսանալու
միամիտ բաղձանքը՝ նոյն իսկ աննե-
րող քննադատին ալ համակրութիւնը
իրեն կը ձգէ:

Ափսոս որ երկայն ատեն անողոր
մահը գանդաղելէն ետքը, ճիշդ իր
գրքին տպագրութեան պահուն փու-
թաց կարճել այնքան ազնիւ կեանք
մը, և միջոց չի թողուց իրեն որ իր

գրքին վրայ իր յատուկ տեսութիւն-
շնորհակալիքը կը յայտնէ անոր հետեւեալ տեղումը պարզէր իր հասկցած կերպով.
Ողբացեալ հեղինակը՝ հիւանդու-
թեամբ տառապած միջոցին, այդ հո-
գը Ա. Մ. Գարագաշեանի վստահացած
ըլլալ կը թուի: Արդէն՝ Իզմիրեանց
կտակի Մասնաժողովին կողմանէ անոր
յանձնուած էր նոյն գրքին քննութիւ-
նը, ուստի իր նպատակաւ տեղեկա-
գիրը տալէ վերջ՝ փութաց ալ աւելի
նպատակաւ յառաջաբան մը շարադ-
րել:

Եթէ այսօր այդ յառաջաբանէն մաս
առ մաս կ'արտատպենք և մեր առար-
կութիւնները անոնց հանդէպ կը շա-
րենք, այս գործը խորապէս ուսում-
նասիրող և ինդույն իրազեկ եղող
անձի մը կարծիքին հետն է որ կը շա-
փուինք:

Նախ Գարագաշեան կը գրէ: «Ստու-
գարանութեան նպատակն է ցուցնել
բառերուն ծագումը, ճիշդ այս նպա-
տակաւ պատրաստուած է այս գոր-
ծը: Այս մատենիս հեղինակը կը ջա-
նայ ցուցնել հայերէն բառերէն շա-
տերուն և կարեւորներուն բուններն
զորս կը գտնէ պարսիկ և յոյն լեզ-
ուաց մէջ» (Յառաջ Ա. Մ. Գ.):

Բան մը որ ստուգապէս կը ցանք հաս-

տատել, այն է թէ՛ Հիւնքեարպէյէն-տեան, բնիկ բառերէ ոմանց օտար բառերու զուգադիպելը միայն մասնա-նիշ կ'ընէ, առանց սրոշելու թէ որը՞ ուսկից ծագումն առած է:

Ա. Օր. էջ 8. — Շաղ, պրակ. ժալ նոյն նշանակութեամբ:

Բ. Օր. էջ 14. — Ուրագ. գործի հիւսան, տճ. քէսէր. ծագեալ 'ի բառէս քէսմէք:

Գ. Օր. էջ 17. — Պիրկ, պրակ. բերչիտէն նշանակէ ոլորել զծայր բեւեռի, տճ. բէրչիյն էթմէք:

Դ. Օր. էջ 18. — Լաստ, թրք. սալ նոյն նշանակութեամբ (արբ. սալ նշանակէ դագաղք):

Ե. Օր. էջ 22. — Առու, լտ. arula նոյն նշանակութեամբ:

Օրինակները մինչեւ գրքին վերջը կրնայինք առաջ տանիլ, բայց ի՞նչ օգուտ. արդէն յայտնի է թէ Հիւնքեարպէյէնտեան մեր պարծանքին համար այս գործին ձեռնարկած էր, մեր բառերուն ծագումը օտար լիզուի վերագրելուն մէջ ի՞նչ փառք կար: Կը ցաւ ինք որ Գարագաշեան իր ըսել ուզածը Հիւնքեարպէյէնտեանի բնիկն մէջ կը դնէ:

Եւրոպ. Գարագաշեան կը յաւելու. «Հեղինակին կարգը կամ գրութիւնն «է իւրաքանչիւր արմատ կամ բուն «բաժնեւ յաջորդէն (**) նշանով, և ի «ներքոյ իւրաքանչիւրին կը դնէ բա «ռեր զորս կը համարի նոյն բառին «վերաբերեալ ճիւղ: Ասացելոցս իր «բեւ օրինակ յիշենք դազան բառն իր «սաքօք: Հոն կը գտնենք անպատշաճ բէ «յիշեալ արմատն ի՞նչ զարմանալի գոյնէր է՝ առ «նէ է- ի՞նչ մեծ լոյս կը գտնուի լեզուին վրայ»: (Յաւաջ. Ա. Մ. Դ.):

Մեր ստուգածը այս է. իւրաքանչիւր հատուած որ յաջորդէն (*) նշանով կը բաժնուի, բառերու շրջանակ

մը կազմող դիպուածական հաւաքում մըն է. և այդ բառերէն որը որ առաջ առնեն՝ կրնաս անկէ քովինն անցնիլ. Ոչ արմատ կայ ոչ ճիւղ. այս հեղ և արմատ Գարագաշեանի շինծուն է. Հիւնքեարպէյէնտեան ինքն իրեն հա-մար այդպէս բան ըրած ըլլալը չ'է ըսեր:

Բայց ի՞նչ փոյթ ահա գալն բառը էջ 53 ուսկից Պանդորի սուսիին պէս ինչ ըսես դուրս կը թափի:

Օր. — Գազան. խեցեկոյտ վճիռ, քիթ, կայտառ, ցեխ, գինդ, կծու, խածնեմ, գայթակղութիւն, խուց, խեցի, քծնիմ, եւայլն, եւայլն:

Այս՝ ութսուն և ինը իրարու ան-նման բառեր, որոնց չ'ես գիտեր որը արմատ է որը ճիւղ. և հաւանակա-նաբար Գարագաշեան ինքն ալ չի գի-տեր: Կը տեսնէ՞ք, անպատշաճ գոյնէր է՝ առ-նէ է- ի՞նչ մեծ լոյս կը գտնուի լեզուին վրայ:

Եւրոպ. Կը գրէ թէ «Արդարեւ բառք չլատ անգամ հնչմամբ, գրերու յա-ւելումով, նուազմամբ և տեղափո-ւթութեամբ կը հեռանան բունէն: Այս «կետը որ մեր լեզուին բեղնաւորու-թեան պատճառն է, գիւտն է մեր «հեղինակին»: (Յաւաջ. Ա. Մ. Դ.):

Այդպէս բան մը Հիւնքեարպէյէն-տեանի մոքէն չ'է անցած, նախ որ իր համեմատութեան դէմ էր. երկրորդ որ սխալ է այդ կարծիք: Այդ օրէնք ընդհանուր լեզուները ցարդ կառավա-րող օրէնքն է, զոր սակայն Հիւնքեար-պէյէնտեան սխալ 'ի կիր առած է: Ատոնք են՝ Տառադարձութեան, Շրջ-ման, Նուազման, Լծորդութեան և Թարմատարներու օրէնքն: Բառարան-ներէ և քերականութիւններէ շատին մէջ կարելի է գտնել զանոնք, ոչ թէ ըստ քմաց և մտացածին կերպով, այլ կարգով կանոնով, ինչպէս թերեւս

վերջէն պատահութիւն ունենանք տեսնելու :

Չորրորդ՝ Գարագաշիան այս գործին՝ Հնդեւրոպական նախալիզուէն զատ նախընթաց մը չի գիտեր, բայց եթէ յիշողութեան ճիգ մը ընէր պիտի տեսնէր թէ կան ինչպէս

Մարգկային Լեզու (Պղ. Յվ.) (1857 Վիէննա)

Ուղղագրութիւն (Գ. Այվ.) (1869 Թէոդոսիա)

Բառաքննութիւն (Նորայր Բուզ.) (1880 Կ. Պոլիս)

Բաղմովէպ (Վենետիկ 1843 սկսեալ) Հանդէս Ամսօրեայ (1887, Վիէննա)

և շատ ուրիշ գրքեր որ թուականով 1893է առաջ են և ստոյգ գիտութեան վրայ հիմնուած :

Իսկ իր այս գրքին վրայ հիանալուն մենք ալ կը հիանանք. որովհետեւ՝ Հիւնքեարպէյէնտեանի Բաշի Բէյի ինքն ալ տեսեր է ինչպէս կը գրէ իր յառաջաբանին մէջ :

Օր. էջ	5 Լուէն	կը հանէ Յուլ
» 15	Արագիլէն	» » Առաքինի
» 69	Կաղամարէն	» » Կաղամբ
» 80	Աքաղաղէն	» » Քարոզ
» 119	Տանիքէն	» » Մատ
» 125	Քարանձաւէն	» » Յուլ
» 172	Լեզուէն	» » Խլուրդ
» 180	Պարապէն	» » Եկեղեցի
» 195	Աղբիւրէն	» » Եղջիւր
» 227	Գլուխէն	» » Փոր
» 276	Խնձորէն	» » Զաւակ
» 288	Պտուկէն	» » Նահապետ
» 311	Սկաւառակէն	» » Մարկաւաք
» 312	Մամուկէն	» » Պապուկ
» 321	Նզովքէն	» » Աւազան
» 338	Բրուտէն	» » Բերդ
» 341	Ժպիտէն	» » Սպառնալիք
» 357	Մառանէն	» » Ստամբուլ

Ահ, հիմա կը հասկնանք թէ ինչու համար Գարագաշեան չ'էր ուզեր որ այս գիրքը քննուի, և քննադատութիւնը լռեցնել կը կարծէր զայն

Ի՞նչո՞ւ անուանելով իրաւ է որ երբ այս գրքին վրայ իր նպատաւոր վճիռը արձկեց, այդ կանխորոշ վճիռ մ'էր. անկեղծ չէր իր դատաստանին մէջ և պատճառ եղաւ որ 1893ին երբ գիրքը հրատարակ ելաւ, լրագիրք Հիւնքեարպէյէնտեանի իսկական արժանիքն ալ անտես առին :

Եւ կամ պէտք է խոստովանիլ որ իր խելքին չի հասած բանի մը վրայ գաղափար յայտնելու կոչուելով արեւի ցփեխ բերնին եկածը դուրս տուաւ, բան մը ըսած ըլլալու համար :

Ահա այսպէս պատճառ կը դատէ ամէն այն գրագէտները որ իրենց Կեանքի Կարգին

Իսկ մենք Հիւնքեարպէյէնտեանի միամիտ արտայայտութեամբ կը շատանանք, և կը խորհինք որ Գառնիկ էֆ. Բարունակեանի ըսած մարդոց նման՝ Հիւնքեարպէյէնտեան ալ Ադամին դրախտին մէջ խօսած լեզուն իր լեզուն կարծողներէն էր, և որպէս զի իր գրքին ստոյգ արժանիքին վրայ որոշ գաղափար մը ունենանք, անոր ապրած ժամանակը աչքի առջեւ բերելու հարկը կ'զգանք :

ՄԻՇՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒՆՍՏՆԵՐ

Որքերը պառկած են. բնութեան գիրքը՝ Յաւիտենականին տաճարը ողորդուած է լոյսերու մէջ. լռին է շուրջս, Հաւաքիչ Կոչի 1 թիւը ունիմ աչքի առաջ, կը վերածաննմ ուշադիր, կը հետեւիմ շահաւետ խրատներուն. ժամ է գրելու իմ շատ սիրած մէկ նիւթի վրայ, մանաւանդ «Ո՞ր է մեր Հաւաքիչ Կոչը» հարցումիս գոնէ մասամբ պատասխանուելուն զգացած ուրախութեանս տակ : Հաւաքիչ Կոչը, իր անդրանիկ շրջանին, յուզեց կրօնական, իմաստասիրական, գրական, պատմական, բա-

նասիրական, եւայլն հարցեր. այս անգամ կ'երեւի գործնական գոյնով. իր ուսումնասիրումները պիտի դառնան երկրագործութեան շուրջ, «որ մարդկային կենաց գոյութեան, բարւոք կենցաղավարութեան եւ զարգացման միակ ապահովականն է» . գեղի կամ գիւղաքաղաքի մը մէջ ապրողներ գիտեն այս սահմանին արժէքը: Գիւղատնտեսութիւնը ամենէն աւելի պիտանի բանն է գաւառներու մէջ. մինչեւ հիմա շատ քիչ մշակուած է այս հողը սակայն. արհեստաւորներու ապագան բարւոքելու համար ձեռնարկներ չեն եղած տակաւին. մասնագէտ երկրագործ, Բոլատ էֆ. անշուշտ այս պակասը լեցնելու հոգ պիտի տանի իր շարք մը յօդուածներով. գիտութիւնները ռամկացնելով է որ պիտի յաջողինք տգէտ դասակարգին գիւրամատչելի ընել կիրարկելի նոր մէթոտներ:

Ակնարկ մը նուիրենք հայ արհեստագործութեան վրայ, ու պիտի տեսնենք թէ ա՛յնքան անճարակ չենք ձեռական աշխատութեանց մէջ: Վաճառականութեան մէջ ալ մեր գործունէութեան յատուկ եղանակն ունինք. գործնական հանգամանքով կը պարծինք. այսպէս, ո՛րքան աղէկ պիտի ըլլար երբ կանուխէն պատրաստուէինք այդ ասպարէզներու: Ընդհակառակ, երթալով նշանակութիւն չի տրուիր ճարտարարուեստի եւ արհեստներու. կազմական կանոնադիրը լոկ վերացական երիտասարդներ կրնայ երեւան բերել, հազիւ կը նշմարենք հոն քաղաքական տնտեսութեան ստուերը. եւ իրաւունք ունի մենէ իւրաքանչիւրը հարցնելու: «Եղբայր, այս ի՞նչ անհաստատ դաստիարակութիւն կը տրուի, այս ընթացքով ո՛չ կատարեալ վաճառական մը պիտի չունենանք, ո՛չ արուեստագէտ մը, եւ ոչ ալ արհեստաւոր մը, մեր տղաքները չ'պիտի կրնան կենսապայքարը մղել աշուղտօրէն»: Ա.յո՛, մենք ճիգ չ'ենք թափած կեանքի պէտքցու բաները մոցնելու նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններու ծրագրին մէջ. ե՛րբ պիտի դրոշմենք աշակերտին մտքին մէջ փորձա-

ռական գիտութեանց ծանօթութիւններ. ե՛րբ ժամանակացոյցներու մէջ տեղ մը պիտի գրաւէ հողագործութեան գործնական դասընթացքը: Գիտեմ, պիտի առարկուի, ինքնօգնութեամբ ամէն բանի տեղեակ կը լինիմք, բայց միայն տեղեկութիւնը չի բաւեր, պէտք է պարզ աչքով զննել հողերը հմուտ առաջնորդի մը ընկերացած, քիմիական տարրերը ցոյց տալ, զանազան վայրերու արգասանդութիւնը ճանչնալ, այլեւայլ արմոխքներու անհրաժեշտ պարարտացումը տալ ընդունուած տարազներու համեմատ: Հազար անգամ կրկնուած է թէ գաւառներու գալորցի ուսումնական վիճակը պատշաճեցնելու է տեղական պայմաններուն, բայց ո՞վ է մոտիկ ընողը, ամէն ոք իր գիտցաճէն մազ մը չի չեղիր, իր յաւակնութեան զոհելով սերունդներու բաղդը:

Առնենք Իգմիտի գաւառը, որովհետեւ հիմա հոն կ'ապրինք, կեգրոնի վարժարանը համբաւ չունի. Պարտիզակի չափահասներն ալ արշալոյսի, վարդի, սոխակի երազողներ էին, երբ դեռ չէր բացուած Պրուսայի շերամաբուծական վարժարանը. անկէջ 'ի վեր քանի մը տասնեակ մասնագէտներ ունի, որոնք ոչ միայն շերամը գիտեն բռնել, այլ նաեւ ճառաւիջակութիւն ու երկրագործական սկզբունքներ. Պ. Սինանեան անշուշտ անոնց ծանօթութեան պաշարներ կը հայթայթէ. այս զարգացած գիւղէն զատ, միւս բոլոր գիւղերը յետնեալ են. մեծաւ մասամբ հողագործներ, չ'ունին միւս կողմէ տարրական գիտելիքներ իսկ. արտադրութիւնները բազմացնելու, աշխատութիւնները եռապատկելու տենչ չունին, սովորութեամբ են. Վիրգիլի Մշակականքին «հնաւանդ արօրը» հրաշակերտ կը համարին, ամեն տարի ուր են նէ հոն կը մնան, բընաւ չկայ առաջգիմութիւն:

Արթննանք ուրեմն: Փրանսայի մէջ զօրաւոր հանճարներ ու բռնիմաց տաղանդներ իրենց մտածման գլխաւոր առարկայ ըրին ժողովուրդը բարձրացնել տնտեսագիտապէս, գրագէտներու եւ բանաստեղծներու հետ փափաքեցան հասցնել

վաճառականներ ու երկրագործներ. նախորդ դարու վախճանը բարեփոփոխումներու թուական մըն էր առևտրական տեսակէտով. ընկերային ու ժողովրդային հարցեր քրքրուեցան այս դարու ընթացքին, եւ վերջին քառորդին մէջ ֆրանսացի հողագործը իր գործառնութեանց սահմանը խիստ ընդարձակեց. նախակրթարաններու, երկրորդական ու բարձրագոյն վարժարաններու մէջ գործնական դասեր հաստատուեցան ճարտարարուեստական ամէն ճիւղերու համար: Այս դարավերջին ալ մենք չենք կրնար հիմնական բարեփոխումներ ընել մեր քաղքեցի ու գեղացի տղաքներու ճակատագիրը ապահովելու համար: Վարժապետանոցի համար ընտրուած աշակերտներէն մին Հալքալը պիտի երթայ եղեր, արդէն Կայսերական այդ վարժարանէն բուսական թրւով աշակերտներ ունինք. թո՛ղ գրեն, գրեն որ մեր հողագործներն երկու երեք տարի խոսքն չձգեն իրենց դաշտերը մէկ տարուան հունձքի փոխարէն, որոշուած չափերով պիտի պարարտացնեն իրենց հողը, որ իր հիւթէն մաս մը կորսնցուցած է. մեքենաներ ալ պիտի գործածեն սովորելով նաեւ զանոնք նորոգել փոխաւորած ատեն:

Արմաշի վանքը գնած է ատենին մէկ քանի գործիներ, որոնք երեսի վրայ ձգուած են աւրուելուն համար. անշուշտ Բողատ էֆ. վերաշինելու եղանակները պիտի սլարդէ բացայայտ: Արտաշէսի զրաճները բաներ մը ակնկալել կուտան. այլեւս պիտի ունենանք գրական, արուեստական ու արհեստական զարգացում միանգամայն:

Այս կերպով գաղափարի մարդուն քով կը գտնենք գործնական մարդը. լաւ իտէ՛սլ մը չէ՞:

Արմաշ

ՊԼՈՒՋ

ԱՆԿԱԽ ԳՈՐԾԻ ՇԵՏԵԻՆՔ

Ընդհանրապէս մեր մէջ, երբ երիտա-

սարգ մը վարժարանի չըջանք կը լրացնէ, ու կը նետուի շուկայի դպրոցին մէջ, իր գաղափարականը կ'ըլլայ գրագիր ըլլալ:

Շատ քիչեր կամ գրեթէ ընաւ տեսած չեմ երիտասարդներ, որոնք ուզէին արուեստական ձեռարուեստներու հետեւիլ եւ կամ անկախ գործի տէր ըլլալ:

Հեռուները չ'երթանք, լիմօնի պղտիկ վաճառողներ՝ այսօր վաճառական եղած են, պղտի տփիկով մը սիկառի թուղթ ծախողներ, մեծ գործարանատէրներ եղած են:

Ա՛լ հերիք չէ՞, որքան գրագիրներու եւ պաշտօնեաներու ահագին բազմութիւն մը ունեցանք:

Զի՞ր բաւէր ալ պարապ պտըտողներու երամը տեսնել, որոնք կ'ըսեն ցաւագին չեչտով մը.

— Պաշտօն չիկայ, գործ չիկայ...
Բայց ո՞վ կ'ըսէ թէ գործ չիկայ. գործ կայ, բայց պաշտօն չիկայ. բնական էր որ, երբ ամենքն ալ գրագիր եւ պաշտօնեայ ըլլային — գաստուու ալ, եթէ կ'ուզէք — այն ատեն պաշտօն չպիտի ըլլար:

* * *

— Գործ կայ, պաշտօն չիկայ...
Բայց կ'աղաչեմ, անկախ գործերու այնքան մեծ շրջանակ մը ունինք, ինչո՞ւ տնոր մէջ չը մանեն մեր երիտասարդները, այսքան ծաղիկավաճառներ, մրգավաճառներ եւ տափաւին ի՞նչ գիտնամ կան ու կան, ինչո՞ւ տառնց մէջ հայերը չը նետուին եւ չ'աշխատին, ի՞նչ կ'ըլլայ երբ մեր դպրոցէ շրջանաւարտ եղող երիտասարդները հետեւին տառնց:

Շատ անգամ հրեայ տղաքներ կը տեսնեմ, որոնք սակայն իրենց սկզբունք ընտրած են անկախ գործել, անոնք քուրջի կտոր մը կը նետեն իրենց ուսը, ու կ'սկըսին պտըտիլ, օր մ'ալ իրենց կը հանդիպի խաչոր ծրար մը տեսարակներու եւ նամակներու, որ կը ծախեն իրեն վաճառատունէ մը. ալ բախտը չինեց անիկա, Լեցուէն հին նամակագրողներ կային այդ նամակներուն վրայ: Եւ օր մ'ալ կը տեսնես որ այդ հնակրկիտը խանութպան եղած է:

Ամեն արհեստ պատուաւոր է այնպէ՞ս չէ, քանի որ արհեստները՝ ամենքն ալ պատուաւոր են և մենք անոնք հաւասար կը նկատենք, մեզ կը մնայ ատոնց մէջէն ընտրել հատ մը:

Իրաւ՝ դժուար է անկախ գործի մը սկզբնաւորութիւնը, քանի որ դրամագլուխ չի կայ. բայց նոյն համեմատութեամբ ալ, յաջողելու հաւանականութիւնը ունի, մինչդեռ անդին ամասականաւոր պաշտօնէութիւնը միեւնոյնն է միշտ և անփոփոխ:

Ձենք ըսել թէ ամեն մարդ անկախ գործի հետեւի. բայց երբ շուրջերնիս կը տեսնենք պարապ պտըտողներ, կը փափաքինք որ անոնք պզտիկ պզտիկ գործերու տէր ըլլան: Օրինակ առնենք շատ մը պատուաւոր վաճառականներէ, որոնք պզտիկ գործերէ յառաջացած են:

Ծախենք բանջարեղէն, լրագիր, ծխախոտ, հաց ու հաւկիթ, ծաղկեփունջեր պատրաստողներ ունենանք, ծախենք ինչ որ ըլլայ, բայց պարզ չ'ապրինք ու անկախ չ'ընենք տէր ըլլանք:

Վ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ՀԱԿԻԹ

(Զատիկի վեպ)

Սուրբ Զատիկի առաջին օրը առտուան ժամերգութեան հանդիսաւոր «Առէք կերէք»-ին անհամբերութեամբ կ'սպասեն տղեկները:

Պատարագիչ քահանան «Առէք կերէք»-ը դեռ լման չըսած՝ տղոց դասէն ընդհանուր չըթըրտուքի ձայն մըն է կ'ելլէ, որու կը յաջորդէ հապճեպ կեղուքտուքի մը խշրտուքը:

Քանի մը երկվայրկեանէն կարմիր կըլեպներու մէջէն շտապաւ դուրս ելած թանձրախաչ հաւկիթներ կը խուժեն ծակաչք բերանիկներէ ներս, և հազիւ լսելի ծամծըմուքէ մը անցնելով կ'ուղեւորին դէպ ի սմբած կծկտած ստամոքսներ, որոնք եօթը շաբաթէ ի վեր միմիայն չոր ու ցամաք պահուց կերակուրներ ընդունած ըլլալուն՝ հոգինին բերանին եկած է. և

այս անգամ Զատիկեան հաւկիթին անակնկալ և ակսորժելի ներկայութենէն հասկնալով ապաշխարութեան օրերուն վերջը դալը, կ'ոգեւորին և աւելի անուշ անակնկալներու կազմ և պատրաստ ըլլալ, յանկարծակիի չի գալու համար անապարանօք ակռաներին կը սրեն, ականջին կը անկեն և աչքերին չորս կը բանան:

Ժամերգութեան աւարտմանը ո՞վ կը սպասէ՝ կեանքէ կշտացած, մէկ ոտքը սատէնը մէկուլ ստքը անդէնը եղող ծերուկներէ և հասուկ մարդերէ ի գառ:

Կարմիր հաւկիթի կլանումէն խոտ գլուարթացած՝ ուլի պէս ցատկաւորն պտըտիկներ, անհանգարտ պատանիներ՝ մանչ և աղջիկ խառն ճառել ձգես տեղ չի կայ, ըսելու աստիճան մարդկային խառութիւն մը ճեղքելով ինքզինքնին ճորով ճարով դուրս նետած են:

Եկեղեցիին բակը խուճապ խուճապ եղած՝ կարմիր հաւկիթի կռուքուք մըն է կը սկսի. «չըթ... դարձա՛ւր, փըթ... կոտորեցաւ, սու՛ւր»-ը այդ օրուան ամենէն աւելի գործածելի բառերն են:

Եւ այս ոգեւորութեան ատեն տղայական անմեղ վէճեր և կռիւներ պակաս չեն ըլլար, որոնց ի տես ով կ'ըլլայ թող ըլլայ «Ժամանակին ես ալ ասոնց պէս տղայ մըն էի» մտքէն չ'անցնել չի կրնար:

Ամեն ազգ իր գնչուն ունի կ'ըսեն. ըսել է հայուն գնչուն ալ հայ բոշան է:

Խելք միտք չի հասնիր, մարդկային ցեղէն այս վտարեալ ճիւղը ինչ սահմանի մէջ, որ ազգի մէջ ալ պարփակուած ըլլայ, իր որոշիչ գիմագիծը, ասրելու տարբեր եղանակը և իւր գաղանի կրօնքը միշտ հեռու պահած են զինքը ուրիշներու հետ խառնուելէ:

Հայ բոշաներ շատիկեկ Սըվազի և Գասթէմուշիի նահանգներուն մէջ կը գլուխուին. յարատեւ թափառաշրջիկ կեանքերնուն և մաղաքործութեան արհեստուն շնորհիւ՝ ամեն քաղաք իրենց այցելութիւնը վայելելու հաճոյքը կ'ունենան:

Տեղ ու դադար չունին. տարւոյն ամեն եղանակին իրենց վրանակիր աւանակներով և ժախեր բեռցած երկանականջ էջերով ժուռ կուգան. Որ քաղաք երթան ներս չեն մտնեն. քաղքէն դուրս կամ աւելի հեռու գետի մը, առուակի մը եզերքը կը կանգնեն իրենց վրանները:

Երկի մարդիկ կը գործեն և կիներնին՝ ի վաճառ կը հանեն ալիւրի մաղ և շարմաղ, փորտաիքէ և փոկերէ շինուած թմբուկներ, Կէֆէր, Կէֆէլէներ:

Իրենց վաճառքը դրամի հետ փոխանակելէ աւելի նախապատիւ կը համարեն ուտելիքի, հագուստի և այլ առօրեայ պիտոյից հետ փոխանակել, հաստատ համոզուած ըլլալով որ իրենց անարժէք աւարկաներուն հնադարեան փոխանակութեամբ վաճառումը աւելի շահաւէտ է. քաղքի կիներն ալ առանց երկար բարակ խորհելու թէ ի՞նչ ճակտի քրտինքով դիզուած է, իր պահեցողի պաշարներէն աման մը ալիւր, պտուկ մը կորկոտ և կամ պահձու մի խոշոր կոտորով մը բոշայի կնիկէն մաղ կ'առնէ՝ համարելով թէ ձրի կ'առնէ քանի որ հնչուն դրամ չի տար, և երկուքն ալ լռելեայն միեւնոյն խնդութիւնը կը զգան մէկզմէկ խորած ըլլալու համոզումով:

*

Ձատկի առաջին օրն է. եկեղեցիին բակը հայ տղոց մէջ բոշայի մանչ մըն ալ խառնուած է:

Բոշայի մանչուն ձեռքը կարծր հաւկիթ մը՝ աջ ու ձախ կարմիր հաւկիթներու կոտորած մը կ'ընէ. կ'առնէ ու կ'առնէ և չի կոտորի:

Տղոց մէջ զայրոյթը տիրած է, ամենուն հաւկիթները բոշայինին գերի ինկած են. աղանին կը կծրցնեն, սակայն շատ առաջ չեն կրնար երթալ, որովհետեւ իրաւունքը կը յարգեն:

Այդ միջոցին հայ աղջնուկ մը, հազիւ 12—13 տարեկան, յառաջ կը նետուի և միւսներուն պարտութիւնը սակաւ ինչ մեղմելու համար ձեռքի կարմիր հաւկիթովը տատարէ՛լ կը կարգայ բոշայի մանչուն:

Բայց քանի մը չարածիններ մէջ կը նետուին և հաւկիթներուն քիթ քիթ կըռուելէն առաջ պայմաններ կ'առաջարկեն:

Նիթէ աղջկան հաւկիթը յաղթող ելլէ, բոշային մանչը պարտաւոր պիտի ըլլայ իր առած հաւկիթները, ամենն ալ ետ դարձնել. իսկ եթէ բոշային հաւկիթը յաղթող ըլլայ՝ աղջկը իրեն պիտի տրուի, հարս ու փեսայ պիտի ըլլան:

Անուշ և սիրուն քահնաւիկներով ամենուն կողմէ կ'ընդունուի այս առաջարկը:

Աղջկին ալ զուարթ և քիչ մը աներես աղջնուկ մը ըլլալուն՝ խնդալով կ'ընդունի. և երկու կողմանէ հայկական Բաբուլէն—Խալաբ—ներով պայմանները կ'ամրապնդուին:

Բոշայինը պաշտպանողական և աղջկան հաւկիթը յարձակողական դիրք կը բռնեն. ներկայ պարտնիկներ և օրիորդիկներ վրիժառու ոգիով մը աղջկան խրախոյս կուտան «հա՛, Զարո՛ւհ, քեզ տեսնենք» ըսելով:

Աղջկան և մանչուն շուրջը բոլորակ մը կազմած և խոշոր խոշոր բացուած աչքերով ակնդէտ ելքին կ'սպասեն:

Քիթահատ յարձակումը այնչափ սաստիկ կ'ըլլայ որ աղջկան հաւկիթը ափին մէջ փոփ փոփ կ'ըլլայ:

Այս անգամ զայրոյթը և բորբոքումը աւելի յախուռն կ'ըլլայ, և ամէնքը մէկ բոշային տղուն վրայ կը յարձակին «քու հաւկիթդ հէլէ՛լէ է հէլէ՛լէ» մէկ բերան պտուտով:

Բոշան տեսնելով որ ուրիշ կերպով չ'պիտի կրնայ համոզել այդ կրակոտները և օձիքը ազատել՝ բարկութեամբ մը հաւկիթը գետին կը նետէ:

Հաւկիթը իւր անկեղծութիւնը ցոյց տալու համար՝ խորին յարգանք դուրս կուտայ իւր անարատ պարունակութիւնը և տղաքը կը հանդարտեցնէ:

*

Սակայն հանդարտութիւնը տիրելով չի լնինար խնդիրը. բոշային մանչը պայմանները կը յիշեցնէ, և պայմանի յարգում միանգամայն գործադրում կը պահանջէ:

Այնչափ բարձրաճայն խնդուքներ և

պոռալ կանչուըռտեղներ կը փրթին որ մինչեւ անդամ ժամերգութեանց արգելք կ'ըլլան. թի՛նչ կայ ի հետաքրքիրներ կամաց կամաց խմբուելով տղոց շուրջը՝ և ղեկութեան վրայ իրենց ծիծաղը չեն կըրնար բռնել:

Բոշային մանչը իր պահանջումին վրայ յամառ է, խնդիրը քառորդուն մը մէջ այնչափ կը մեծնայ որ՝ ժողովուրդը մեծ ու պզտիկ ամենն ալ կ'իմանան:

Նրկու կողմանէ իրարու հետ վէճի կը բռնուին. բոշային ծնողքը «Ա» աղջիկը իմ մանչուս խաբէին է» ըսելով իրաւունքը կը պաշտպանէ:

Բանի մը աստուածավախ ծերունիներ ալ մէջ մտնելով «Մենք տեսանք անցուցինք, ասանկ բան չի տեսանք... ասոր մէջ ես կըսեմ Աստուծոյ մատը կայ... չըլլայ որ Աստուածը բարկացնենք... հէ՛հ ասանկ օրով մը... եկէք աս աղջիկը աս մանչուն տանք թող լմնայ էրթայ» կ'ըսէին:

Մէկը ըսաւ «Ես կնքահա՛ր կ'ըլլամ». ուրիշ մը ըսաւ «Ես հարսնեց ծախքը վրաս կ'առնեմ», և վերջապէս շատերը վրայ ըլլալով աղջկան ծնողքը համոզեցին:

Այսպէսով քանի մը խեղկատակ ստահակներու ըրած մէկ կատակը իրականութեան փոխուեցաւ:

Շարժութ մը վերջը նշանաւորք եղաւ, և առջի պսակին ալ նշիկի և Զարուկի պսակադրութիւնը կատարուեցաւ հետաքրքիր ամբօխի մը ներկայութեամբ. ուրախ զուարթ խրախճանքներով, նոր հարսը էշու վրայ հեծցուցած՝ փեսային հօրենական ապարանքը — վրանը — տարին յանձնեցին:

Կարմիր հաւկիթին այս սիրային արգասիքը շատ խնդացուց հանդիսատեսները. ամենէն աւելի խնդացին բոշային ծնողքը՝ չքնաղ հարսնուկի մը ախրացած ըլլալուն համար:

Բանի մը օր վերջը բոշայի խումբը սուս-բուս չուած էր իր շարժուն կալուածներուն հետ Երեմիայի մըն ալ տանելով:

Այն տոնները խաղ մը հանեցին կարմիր հաւկիթին խաղցած դերին վրայ, ու-

րու սա միակ տունը կը յիշեմ:

Հաւկիթ, հաւկիթ, կարմիր հաւկիթ, Հետո բերիր նոր Զատիկ:

Ինչո՞ւ խաժ աջուի, պոլով քիթ,

Բոշային տուիր մեր աղջիկ:

Սակայն ամենուն ալ խնդուք իրենց փորը մնաց. երեք ամիս վերջը՝ Զարուկ սարեր ձորեր կտրելով փախած հօրը տունը եկած էր. ալ չի գնաց:

Կ'երեւի թէ խեղճ աղջիկը բոշաներու գրօսաշրջիկ կեանքէն շատ չ'ախորժեցաւ:

ՔԱՐՈՂ

ԱՌՏՆԻՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԶԱՐԱՃԺԻ ՄԻՋԱՏՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ



... ՄԼՈՒԿԸ !!!

Ծանօթ է ձեզ այնպէս չ'է՞. բայց կը ճանչնա՞ք ուրիշ կենդանի մը իրմէ՛ աւելի զազիր, գայլերի, ֆնտտակար, աղտոտ, պաղպառակ, տգեղ... ալ ի՞նչ բով. բայց հոտը՝ այդ անտանելի հոտը՝ կարելի բա՞ն է չը յիշել, մահուանդ երբ իր նողկալի թերթիւներէն վրայ կը խօսինք: Եթէ միջատաբան (entomologiste) մ'իսկ ըլլայի, թէեւ հաճոյքով՝ բայց միշտ զգուանօք և ակամայ պիտի բռնէի զայն. և առանց քննելու՝ պիտի փորձէի նախ ճգմել, եթէ հոտը միտքս չ'իյնար... բայց կատակը մէկ կողմ թողունք, և մեր հակափրութեան առջեւ ալ կետ մը գնելով լրջութիւնը ձեռք առնենք, և վարկեան մը իրր բնապատում ուսումնասիրենք այդ խորամանկ միջատին կեանքը և յատկութիւնները, որ թերեւս զինքը լաւ մը ճանչնալով գիւրաւ կարողանանք ոչնչացնել:

Անկողնայ մլուկը՝ ինչպէս կը կոչեն գիտնականները (աֆանիա լեֆելա-լա), իր ապրելու եղանակով և սննդառութեան տեսակետով, բաւական կարեւոր տեղ մը բռնած է կենդանաբանական ուսումնասիրութեանց մէջ. որովհետեւ՝ մակարոյծ և ոչ-մակարոյծ կենդանիներուն մէջ, իբր միջանկեալ կը նկատուի: Իր սննդառութեան եղանակին համար մակարոյծ մ'է. իսկ յարաբերաբար ազատ կամ լաւ եւս անջատ ապրելուն համար ալ ոչ-մակարոյծ մ'է, և կը պատկանի կիսաթեւ (hemiptère) միջատներու կարգին:

12,000 է աւելի մլուկի տեսակներ ճանչցուած են մինչեւ ցարդ, և ատոնց ամենքն ալ այդ անտանելի հոտը կը բուրեն: Փալով մեր մլուկին, ինչպէս գիտէք, կարմրաթոյր տափակ և բարակ մարմին մ'ունի, որ շատ կը յարմարի սաւաններու մէջ տեղէն անշուշտ սահել անցնելու:

Քնութիւնն ալ ի՞նչ ներդաշնակ յարմարութիւններ ունի. Փորը կազմուած է անրակներէ, և լանջքին քով՝ եթէ ուշադրութեամբ նկատուի, մակաթեւերու սկզբնաւորութիւններ կը տեսնուին: Փոքրիկ գլուխ մը, երկու մանր աչքերով, կը կրէ երկու կարճ բողկուկներ (antenne) միջատներու յատուկ հոտառութեան և երբեմն ալ շօշափեւեաց գործարան, որոնք բարակ եղջիւրներու պէս գլխուն երկու կողմը սցուած են): Եւրոնին վրայէն դէպ 'ի կուրծքը կ'երկարի սրածայր և նրբակազմ կնճիթ մը: Լը բնակի ընդհանրապէս անկողնոյ և պատի ձեղքերու մէջ, բարձրու և վերմակներու ծալքերուն մէջ, ինչպէս և պատկերներու և ուրիշ կարասիներու վրայ աչքի չի զարնող տեղեր: Օրուան ըյտին կը պահուրտի, և երբէք չ'ուզեր կենդանութեան նշան ցոյց տալ. բայց գիշերը, երբ ցերեկուան աշխատութիւններէն յոգնած ինքզինքնիդ անկողին կը նետէք, այդ խորամանկ կենդանին՝ իր հոտառութենէն առաջնորդուելով, հազարու մէկ նենդապատիր նախադգու շութիւններով կը սողտկի մինչեւ ձեր... Հասկնէն ներս. և հոն՝ իր յաջողութենէն արբելա, իրեն համար տիե-

զերքի մը չափ անհուն մսակոյտին վրայ նետուելով անյադարար կը ծծէ կենսատու հեղուկը՝ իր կեանքը շինելու համար: Երբ բազմաթիւ են անոնք, տմառուան կարճ գիշերին մէջ, անուշ քունիկդ կը խանգարեն. և երբ չի կրնան մարմնոյդ մօտենալ, այն ատեն դէմքիդ աչք կը տնկեն. իսկոյն կը հեռանան անկողնին քովէն, և կը շուլլուին պատերն 'ի վեր, կը հասնին մինչեւ ձեղուն, և այնչափ ճարտարութեամբ կ'ընտրեն իրենց նշանակեալը, որ առանց սխալելու կը նետուին ցանկացած տեղերնուն վրայ. շատ հաւանական է որ, իրենց այս յաջողակութիւնը կը պարտին մասնաւորապէս դէմքէն դէպ 'ի վեր բարձրացող օդային զաղջ սիւնակին: Մլուկներու արգաստուրութիւնը այնչափ մեծ է որ, քիչ ժամանակուան մէջ, տան մը ամեն կողմը անհամար բազմութիւնով կը ծածկեն: Եթէ ձեզի ըսեմ թէ, էգ մլուկը տարին 4 անգամ հաւկիթ կ'ածէ, անշուշտ չը պիտի զարմանաք այն ատեն: Մարտ, մայիս, յուլիս և սեպտեմբեր ամիսներուն մէջ կ'ածէ իր հաւկիթները: Գաղափար մը կազմելու համար իր արտառովոր արգաստարութեան վրայ, փոքրիկ հաշիւ մ'ընենք:

Նիթագրենք թէ 10 մլուկներ՝ որոնց 5ը արու և 5ը էգ, առաջին ձուարկութեան (հաւկիթ ածելը) պիտի տան 5 անգամ 50 հաւկիթ, — մէկ մլուկը 50 հաւկիթ կ'ածէ վեր 'ի վերայ մէկ անգամուն — որ կ'ընէ 250, կէսը արու կէսը էգ: Երկրորդ սերնդաւորութեան պիտի ունենանք 125 նոր արտադրիչներ եւս, որ ամեն մէկը 50ական հաւկիթ ածելով, նորածիններուն թիւը պիտի հասնի շուրջ 6500ի: Իսկ երրորդ սերնդաւորութեան ժամանակ, որ յուլիսի վերջերը պիտի ըլլայ, անոնց թիւը պիտի բարձրանայ 150,000ի... չորրորդ ձուարկութեան վրայ չը պիտի փորձեմ հաշիւ ներկայել ձեզ, որպէս զի՝ չ'ըլլայ որ միլիոնաւոր մլուկներու ներկայութենէն ահաբեկելով չ'ուզէք մտիկ ընել զիս:

Չմեռը մեծ մասամբ մլուկները կը սատ-

կին. մնացածները թմրած իրենց ծակերուն մէջ կը պահուըտին, և հետեւեալ գարնան վերականգնանալով կ'սկսին հաւկիթ ածել: Սեպտեմբերէն մնացած հաւկիթները առանց աւրուելու մինչեւ գարուն կը դիմանան, որչափ ալ ցուրտ ընէ: Մըտնալը չափահաս ըլլալու համար 11 չաբաթ, կամ վեր 'ի վերոյ 75 օր պէտք է: Ռաֆայէլ Պլանչառ կ'ըսէ թէ, իւր ծնած վարկեանէն մինչեւ վերջին խորեռ (mue, փոփոխութիւն մորթի). — այսինքն՝ թրթուր եղած ժամանակ — դեռահաս մըտնալը՝ մորթային 3 գեղձեր (էֆդէ) կ'ունենայ՝ գարշահոտութիւն արտաբերող, որոնք կը գտնուին փորին առջին 3 հատուածներուն մէջտեղը: Վերջի խորխին ժամանակ, այս գեղձերը կը կծկին՝ կ'անհետանան, և անոնց կը յաջորդեն ուրիշ 2 նոր գեղձեր: Այնպէս կը կարծուի որ, մըտնալին ալ Ամերիկայէն զրկուած ըլլան մեզ. բայց սխալ է այս կարծիքը, որովհետեւ Արիստոտել և ուրիշ հին դարու հելլեն պատմագիրներ անոր գոյութեան վրայ գրած են արդէն:

Թէ ի՞նչպէս կարելի է ազատիլ այդ զազիր միջատէն:

Միջոցները թէեւ շատ են, բայց ամենն ալ ոչ օգտակարապէս արդիւնաւոր. մանաւանդ եթէ ճիշդ ժամանակին չի ձեռնարկուի դանոնք ոչնչացնելու միջոցներուն. որ ամենէն հաւանականը մարաւմտոյ մէջ է, երբ արդէն թւով քիչ են, և նորածիններն ալ փոքր: Քանի մը տարիներէ 'ի վեր օգտակարապէս կը գործածուի, գրեթէ աշխարհիս ամեն կողմերը միջատասպան փոշի մը, որ կը ստորադրուեն բիոէքո, կոչուած տունկէ մը: Բիոէթոն (իգափոզ, ագրիարհոյ) վայրի վիճակի մէջ կը գտնուի առատօրէն կովկասի լեռանց վրայ. իր վաճառականութիւնը այն աստիճան կարեւորութիւն ստացաւ վերջերս, որ շատ տեղեր սկսան անոր մշակութիւնով զբաղիլ. 'ի միջի այլոց, Տալմացիա և Նոտվոյ այլեւայլ նահանգները մեծաքանակ կ'արտադրեն, և իր վաճառականութենէն շատ գոհ են:

Բայց Ամերիկացիք ալ ետ չի մնացին անոնցմէ, և տարածեցին իրենց հողերուն մէջ կանկառատներէ իգափոզի (էֆդէ-էֆդէ-էֆդէ-էֆդէ) մշակութիւնը, որ բուն իգափոզէն կը տարբերի իր տերեւներուն ձեւով: Իգափոզը կը նմանի երիցուկի տունկին (էֆդէ-էֆդէ), և անոր ցեղէն է. լայնաբաց ճառագայթածեւ և մագոյն ծաղիկ մը ունի. արմատը ճկոյթ մատի հաստութեամբ կ'լար, նրբաթել և դժուարաթեք, կեղեւը դեղնաթուր. իսկ միւրը ճերմակ, կծու համ մը ունի, որ կերուած ատեն կ'այրէ լեզուն և կը փուռնդտացնէ, միեւնոյն անգամ բերնի լորձունքն ալ վազցնել կուտայ. և այս յատկութեան համար կը գործածուի ընդհանրապէս, իբր լորձունքը գրգռող դեղ, և երբեմն ալ ակուայի ցաւերը դադարեցնելու համար, որ կը գործածեն օգտակարապէս, երբ ակուայի ցաւը յառաջ կուգայ լինտերու անգորութենէն: Բայց իւր միջատասպան, միայն իր ծաղիկն է որ կը գործածուի, զայն չորցնելով և փոշիացնելով:

Իգափոզի մշակութիւնը թէեւ դժուար, բայց քիչ մը խնամքով կարելի է անոր տիրանալ: Տունկերը իրարմէ 60 հ. մեթր հեռաւորութիւնով կը տնկուին ուղղաձիգ գծերու վրայ, և այս գիծերն ալ իրարմէ 1,25 հեռու: Տունկերը կը հասնին մինչեւ 70 հ. մեթր բարձրութեան, և կ'արտադրեն խիստ շատ ծաղիկներ. մշակութեան գլխաւոր պայմաններէն մէկն է առատ և յաճախ սառցում (ջուր տալ), և երկրորդ բաճեւ և բրեւ: Առաջին բերքաղը (մահաւառնել) կը կատարուի տընկարկումէն 3 տարի վերջը: Նարնջենիի կլիմայէն սկսելով, մինչեւ ձիթենիներու կլիմային տակ կարելի է մշակել:

Ծաղիկները չորցնելը մեծ խնամքի կը կարօտի, և որչափ աղէկ չորցուած ըլլան անոնք, փոշիին հոտը և աղբեցութիւնը այնչափ մեծ կը ըլլայ:

Գործածութեան ամենէն դիւրին եղանակն է, սղախի փքոցներու (էֆդէ-էֆ) միջոցաւ փոշին փչել սենեակներու բոլոր ծակ ու ծուկերուն մէջ, ուր կ'ենթադ-

բուհի միակ ըլլալ: Դժբաղդաբար այս եղանակով ալ կարելի չ'է միւսկներէ վարակուած տուն մը կատարելապէս մաքրել, իրենց տարօրինակ արգասաբերութեան պատճառով: Բայց եթէ յետագայ միջոցը գործածէք, գիւրութեամբ կրնաք առաջքը առնել:

1 լիթրա ջուրի մէջ հալեցուցէք նախ՝ 100 կուամ սեւ օճառ (արագ սաւառ), աւելցուցէք վրան 50 կուամ քարիւղ, ուժով զարկէք մինչեւ որ աղէկ մը իրար խառնուին. յետոյ ձարձատիչով (ֆէսէյէ) մը բոլոր ծակ ու ծուկերը ցայտեցուցէք զայն. և անոր վրայէն երբ իգափողի փոշին փչէք, թէ թացութեան պատճառով անիկա կը փակչի ինկած տեղը, և թէ հոտը աւելի զօրաւոր ըլլալով, ազդուապէս կը ներգործէ միւսկներուն վրայ:

Սեւ աճառը և քարիւղը արդէն միջատասպան յատկութիւններ ունին առանձին, և իրարու հետ միանալով իրենց ուժը կը բազմապատկի. իգափողի փոշին ալ վրայէն ցանուելով, վերջնականապէս կրնաք ոչնչացնել զանոնք: Սյս գործողութիւնը կատարելու է տորին 4 անգամ, երբ միւսկները հաւկիթէն նոր դուրս ելած են. այսինքն՝ մարտ, մայիս, յուլիս և սեպտեմբեր ամիսներու վերջերը:

Վերայիշեալ օճառի և քարիւղի խառնուրդը օգտակարապէս կրնայ գործածուիլ, ծառերու թրթուրները (ԲէրԲէր) ոչնչացնելու համար, որ կը սրսկեն ցախաւելով (շուր փէփէփէփէ) կամ ձարձատիչով:

Լ. ԲՈՒՏ

ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Շաբ. Տեա քիւ 3)

Մակարդներուն ընդմալից գործարկեց. երկարատեանէ ի վեր փորձով հաստատուած է թէ, մակարդը միայն որոշեալ բարեխառնութեանց (տաքութեանց) մէջ կրնայ ներգործել կաթին վրայ. եւ այս

սահմանը ջերմաչափի(*) 15 աստիճանէն մինչեւ 41ին մէջն է: 15էն վար՝ գրեթէ չի ներգործեր, 10նէն վար ալ իր ազդեցութիւնը բոլորովին ամուլ կը մնայ, եւ 41էն մինչեւ 60՝ հազիւ թէ զգալի կ'ըլլայ:

Նոյնպէս՝ որոշեալ տաքութեամբ կաթի մէջ եթէ մակարդի մը ծաւալին միութիւնը ընցուի (1 հ. մեթր խորանարդ, որ 1 լիթրային 1000րդ մասն է եւ հաւասար 1 կուամի. վեր ի վերոյ Բալլէ-Է շուր մը մեծութեամբ ամանի մը պարունակութիւնը որուն ամեն մէկ կողմը 1 հ. մ. է, այս վերջինին զօրութիւնը համեմատապէս կը հաւասարի ընդմաժած կաթին ծաւալին. եւ ժամանակի տեւողութեան ալ հակառակ կերպով: Այսինքն՝ եթէ 1 կուամ մակարդ 10 լիթրա կաթ ընդմաժէ, 2 կուամը պիտի ընդմաժէ 20 քիլօ, տաքութեան միեւնոյն աստիճանին մէջ եւայն, եւ 1 կուամ մակարդը եթէ կէս ժամուան մէջ 10 լիթրա կաթ մակարդէ, 2 կուամը պիտի մակարդէ միեւնոյն քանակութեամբ կաթը քառորդ ժամու մէջ:

Մակարդի մը ուժը փորձելու համար, կաթին տրուելիք տաքութեան աստիճանը փոփոխական է. բայց կարելի է 41 աստիճանը իբր հիմնակետ բռնել, որ ընդմաժելու բարձրագոյն աստիճանը կը նկատուի, ինչպէս վերը տեսանք: Մակայն կոզու կաթը ծիծէն անմիջապէս դուրս ելած ժամանակ 37° ըլլալուն, Մ. Տիւքլօ խորհուրդ կ'ուտայ այս թիւը գործածել. ուրիշ վարպետներ ալ կ'ըսեն թէ 35°ը աւելի յարմար է: Բայց այս թուանշաններուն մէջ մեծ տարբերութիւն մը չըլլալով, մանաւանդ գործնականի մէջ, կարելի է առանց անպատեհութեան գործածել անոնցմէ մէկը իբր հիմնակետ: Ընդմաժելու ժամանակի տեւողութեան մասին ալ վարպետները համամիտ չ'են:

Մ. Տիւքլօ կ'առաջարկէ իբր օրինաւոր հիմնակետ 45 վարկեան, Փրանսական շատ մը պանիրներ այդչափ ժամանակամիջոցի

(*) Ջերմաչափի աստիճաններուն վրայ խօսած տեսնելիս, պէտք է հստակաւ հարկաւոր ջերմաչափը: Երբ Ռէօմիւրի կամ Ֆարէն Հայթի ջերմաչափին վրայ խօսինք, այն տաւն անոնց քովիլը պիտի նշանակենք իրենց անունը:

մէջ մակարդուելուն համար: Բայց ամենէն աւելի խելքի մօտը Մ. Սօբլէի առաջարկածն է, որ շատ մը մեծ պանրատուներու մէջ կը գործադրեն երբ իրենց մակարդին ուժը փորձել ուզեն: Այն է, որեւէ քանակութեամբ մակարդ, պէտք է իր ծաւալին 10,000 անգամը կաթ ընդամածէ 40 վարկեանի մէջ կաթին տաքութիւնը 35° ըլլալով: Գործնականի մէջ հետեւեալ եղանակը նախընտրելի է իր դիւրութեան համար:

Առէք ապակեայ մեծկակ գաւաթ մը, որուն պարունակութիւնը 1 լիթրայէն աւելի ըլլայ: Ընցուցէք մէջը 35 աստիճան տաքութեամբ 1 լիթրա կաթ, եւ խառնեցէք անոր 1 հ. մեթր խորանարդ՝ ձեր ուզած մակարդէն, որուն ուժը 10,000 ըլլալ կ'ենթադրուի: Վարկեանը անգամ մը գաւաթը ծռեցէք ուշադրութեամբ, հասկընալու համար թէ՛ կաթը ընդամածած է. արդ՝ եթէ ընդամածումը 4 վարկեանի մէջ տեղի ունենայ, ըսել է մակարդին ուժը իրօք 10,000 է: որովհետեւ՝ 1 հ. մեթր խորանարդը 4 վարկեանի մէջ 1 լիթրան եթէ ընդամածէ, հարկաւ այդչափ մակարդը 10 լիթրա (10,000 հ. մեթր խորանարդ) կաթը 40 վարկեանի մէջ պիտի ընդամածէ: Իսկ եթէ ընդամածումը 6 վարկեանի մէջ տեղի ունենայ, այն ատեն հետեւեալ հաշիւը ընելով, ճիշդ իր զօրութեան աստիճանը կը գտնանք. այսինքն՝ 4 վարկեանը այնպէս կը համեմատի 6 վարկեանին, ինչպէս (+) կաթի անծանօթ քանակութիւնը 10,000ի. ուրկէ հետեւցնելով կը շարենք հետեւեալ համեմատութիւնը.

$$\frac{4}{6} = \frac{x}{10,000} = 6666, \text{ որ է մակարդին ուժը:}$$

Ըսել է, որեւէ մակարդի ուժը հասկնալու համար, պէտք է 10,000 թիւը բազմապատկենք 4 վարկեանով, եւ արտադրեալը բաժնենք մակարդուած ժամանակին թւոյն հետ, որ վերի հաշոյն մէջ 6 վարկեան էր, եւ կրնայ ըլլալ 3, 7 եւ այլն:

Ահաւասիկ սակայն ցուցակ մը, որ 100 լիթրա կաթի ընդամածումին համար, մակարդի քանակութեան եւ ժամանակի տեւողութեան չափը կը ցուցնէ, եւ գործնականի մէջ օգտակար կ'ըլլայ:

Կաթի օախութիւնը	Վրկեան 45	Վրկեան 40	Վրկեան 35	Վրկեան 30	Վրկեան 25
Աստիճան	Կաթ	Կաթ	Կաթ	Կաթ	Կաթ
35	9	10	11,5	13,5	16
31	11	12,5	14,5	17,5	20
28	14	16	18,5	21,5	25

Մակարդը գործածելու մեկ քահի կարեւոր կանոններ. — Զօրաւոր հոտ ունեցող մակարդները երբեք մի գործածէք, որ իրենց հոտը կրնան ժողմանցը պանիրին:

Որոշեալ քանակութեամբ կաթ ընդամածելու համար, մակարդին չափը կախումն ունի շատ մը պարագաներէ. ինչպէս՝ մակարդին ուժէն, կաթին տեսակէն, իր տաքութեան աստիճանէն, տարւոյն եւ զանակէն եւ պանիրին տեսակէն որ մտադիր էք շինել:

Մակարդի ազդեցութեան տակ կաթի ընդամածումը կը կատարուի, կաթին մէջ գտնուած տարրէ մը, եւ մասնաւորապէս հանքային աղերէ, ասոր համար է որ պանրատուներու մէջ երբեմն կաթը միւսնոյն եղանակով չի մակրդիր, թէեւ գործածուած մակարդը ըլլայ միւսնոյնը, մակարդման տեւողութիւնը կը տարբերի: Մակարդին ազդեցութիւնը կը շատնայ երբ կաթը թթու ըլլայ, իսկ ընդհակառակը տեղի կ'ունենայ երբ ալկալի ըլլայ, այսինքն ստորունակէ իր մէջ, բնածխային նատր (-co₂), ոսկերորակային նատր (NaCl), նոյն իսկ ոսկերորակի թթու (-co₂ պո-է+):

Ամառը կաթը աւելի դիւրութեամբ կը մակրդի քան ձմեռը, եւ այս պատճառաւ պէտք է ամառը մակարդին քանակութիւնը քիչցնել:

Պարարտ կաթը ընդամածելու համար աւելի մակարդ պէտք է, քան ցամաք կաթը:

Շատ մակարդը վնասակար է, որովհետեւ մաճառակը կարծր կ'ըլլայ, կը փայրի, հատիկները իրար չ'են փակիր, կաթին սերուցը շիճուկին հետ կը վազէ կ'երթայ. եւ այս կերպ սլաորաստուած պանիրը չոր կ'ըլլայ, կը կոտրուի կամ կը ճաթոտի:

Նոյնպէս վնասակար է քիչ մակարդը,

որովհետեւ չատ երկար ատեն պէտք է կաթը ընդմածելու. շինուկը դժուարութեամբ կը զատուի, եւ մաճառակին մէջ մնալով կը թթուի եւ անոր լեղի համ մը կուտայ:

Մակարդուելու ատեն՝ կաթին տաքութեան աստիճանն ալ մեծ ազդեցութիւն ունի մաճառակին բնաւորութեան վրայ: Կակուղ պանիրներու պատրաստութեան համար յարմար բարեխառնութիւնը 25—33 աստիճանին մէջ է: 25էն վար մաճառակը շատ կակուղ կ'ըլլայ, եւ շինուկը շատ կամաց եւ անկատար կերպով կը զատուի. իսկ 33էն վեր, մաճառակը կարծր կըլլայ եւ դժուար կը հասուննայ:

Պանիրներու տեսակին վրայ խօսած ատեննիս պիտի ցուցնենք թէ՛ ո՞ր պարագային մէջ պէտք է այս կամ այն աստիճան տաքութեամբ մակրդել:

Եւրոպայի պանրագործներէն ոմանք կ'ըսեն թէ՛ մակարդի խտացեալ արտամուղերը յարմարութիւն ունին կաթնայի՝ կամ որ նոյնն է խաշած պանիրներու պատրաստութեան, քան կակուղ պանիրներու. եւ այս վերջիններուն համար կ'ըսեն, տկար մակարդները աւելի նպաստաւոր են, որովհետեւ՝ յառաջ եկած մաճառակը աւելի համաձեւ, կակուղ կ'ըլլայ, եւ պանիրն ալ աղէկ եւ շուտ կը հասուննայ:

Այս դիտողութիւնը թէեւ արդարացի է, բայց որովհետեւ այդ արտամուղերուն առաւելութիւնները խիստ շատ են, աւելի աղէկ է այս վերջինները գործածել, որ մակրդելու ատեն զանոնք տկարացնելը շատ դիւրին գործ մ'է:

Կակուղ պանիրներու պատրաստութիւնը նպաստաւոր պայմաններու մէջ կատարելու համար պէտք է՝

1. Անպատճառ կաթը մակրդել 25—33 աստիճանի մէջ. — 2. Թէ այս բարեխառնութեան մէջ մակարդումը կարելի եղածին չափ երկար տեւէ, 3 ժամ գոնէ:

Արդ, ենթադրենք որ, մեր տրամադրութեան տակ ունեցած ըլլանք մակարդի խտացեալ արտամուղ մը, որուն ուժը հաւասար ըլլայ 10,000ի, եւ որուն 14 կըռամը՝ 45 վարկեանէն կարող ըլլայ ընդ-

մածելու 28 աստիճան տաքութեամբ 100 լիթրա կաթ: Եթէ կը պահանջուի որ, այդ 28 աստիճան տաքութեան մէջ, ընդմածումը 3 ժամէն կատարուի փոխանակ 45 վարկեանի, այն ատեն գործածուելիք մակարդին քանակութիւնը որոշելու համար պէտք է հետեւեալ օրէնքին հետեւիլ, թէ ընդմածումի տեւողութիւնը, գործածելի մակարդին քանակութեան հետ հակառակ կերպով կը համեմատուի. ուստի՝

$$\frac{f \text{ կռամ}}{14 \text{ կռամ}} = \frac{45 \text{ վարկեան}}{180 \text{ վարկեան}} = 3,5 \text{ կռամ}$$

մակարդ պէտք է:

Բայց պէտք է միեւնոյն անգամ հաշուի առնել որ, ընդմածելու տեւողութիւնը կ'երկարի, երբ կաթին եւ մակարդին ծաւալին մէջ գտնուած յարաբերութիւնը 12,000ը կ'անցնի, այն ատեն պէտք է մակարդին չափը 5 կռամի բարձրացնել: Եւ խորանարդ հ. մեթրի բաժնուած ապակեայ խողովակի մը մէջ չափելու է 5 հ. մեթր խորանարդ մակարդ, լեցնելու է զայն գաւաթի մը մէջ, եւ իւր ծաւալին 8—10 անգամը վրան ջուր աւելցնելով, կաթիլ առ կաթիլ 28 աստիճան տաքութեամբ 100 լիթրա կաթին մէջ լեցնելու է, շարունակ խառնելով զայն ամեն կողմէն:

(Շարունակելի)

Ղ. ԲՈՒՍ


ՊԱՐՏԻՉՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԽԼՈՒՐԴ (ՔԵՍՍԹԵՊԷԿ)

Բ.

Խլուրդները ոչնչացնելու համար պէտք է օդը բաց օր մը որոշել. որովհետեւ երբ օդը գեղեցիկ է, եւ բարեխառնութիւնը մեղմ, խլուրդը աւելի աշխուժութեամբ կ'աշխատի, քան ցուրտ եւ անձրեւոտ օրերու: Երբ որդերը ժողվէք, մեծկակ տախտակի մը կամ թուղթի մը վրայ դրէք զանոնք, որ շարժելով՝ իրենց վրայ գրտնուած հողէն կը մաքրուին. յետոյ զանոնք լեցուցէք ամանի մը մէջ. եւ խառնեցէք խրդասպան փոշին, ամանը շարժելով եւ թոթուելով, մինչեւ որ լաւ մը այդ փո-

շիով ծեփուին. դրէք որդերը վերջը ուրիշ ամանի մը մէջ խաւ առ խաւ, կարգ մը որդ կարգ մը փոշի. թողէք այսպէս վեց ժամ, եթէ այս կերպով աւելի մնան, այն ատեն որդերը սատկելէ վերջը պիտի հո-



Խաւ

տին, եւ խլուրդը հասկնալով չի մօտենար անոնց. յետոյ որդերը դրէք մէկ առ մէկ խլուրդներու գետնուղիներուն մէջ, եւ մասնաւորապէս ամենէն նոր բացուած ճամբաներուն մէջ. չի մոռնալով սակայն որդը դրուելէն անմիջապէս վերջը ծակը գոցել հողի կոշտով, կամ հարթ քարի կտորով մը, ինչպէս ըսած էինք անցեալ անգամ միեւնոյն տեղը 1 որդէն աւելի դնել պէտք չ'է. որովհետեւ 1 որդը կրնայ 1 խլուրդ սպաննել: Այս գործողութիւնը պէտք է կատարել ըստ կարելոյն ցորեկէն առաջ, որդերը միջատասպան փոշիին մէջ խառնուած ատեն պէտք է ողջ ըլլան. եթէ անմիջապէս չ'պիտի գործածէք, ամանի մը մէջ պահելու է դանոնք, կարգ մը հող եւ կարգ մը որդ չարելով:

Խլուրդի սովորութիւնները. — Խլուրդը իր բնակութիւնը կը հաստատէ առանց բացառութեան գետնին տակը, բայց անորոշ խորութիւնով. մերթ ծառի մը տակ, մերթ եւս մացառուի մը մէջ. եւ եթէ ասոնցմէ մէկը չի գտնայ, այն ատեն դաշտերու մէջտեղը: Ամենէն առաջ, իր բոյնէն սկսելով գետնին տակը ճամբայ մը կը բանայ գրեթէ միշտ ուղիղ գծի վրայ, որ կ'երկարէ մինչեւ հոն՝ ուր որոշած է իր աշխատանոցը կամ կայարանը հաստատել. ուրկէ դաշտին ամեն կողմը փորելով,

ներքնուղիներ կը շինէ, իր սննդեան համար որդեր եւ ճճիներ գտնելու համար, Առաջին դետնուղին դիւրին է ճանչնալ: մէկգմէկէ հեռու գետնէն վեր բարձրացուցած հողակոյտերով:

Գետնին տակը ապրելու սահմանուած ըլլալուն պատճառաւ, խիստ փոքր աչքեր ունի. բայց բոլորովին տեսողութենէ զուրկ ալ չ'է ինչպէս կը կարծեն շատեր: Ահանջի արտաքին բլթակը կը պակսի, բայց աղէկ կը լսէ: Դունջը (քիթը) կնճիթի ձեւով (խոզերու քիթի պէս) երկայն է. առաջակողմի անդամները (թեւերը) կազմուած են այնպիսի ձեւերով, որ կը նմանին ճիւղ նաւակի թիւ (պէտէ), որոց միջոցաւ դիւրութեամբ հողերը կը շարժէ թիավարի մը պէս, կը փորէ պարտիզպանէ մ'աւելի աղէկ, որովհետեւ թաթերը սուր եւ կարծր ճանկերով յօրինուած, կը նմանին ուժեղ եւ ջղուտ մագիլներու (բէնէ):



Խլուրդին Թաթը

Խլուրդը էապէս մտակեր եւ փոքրիկ չորքոտանի մ'է եւ իր ամենէն աւելի սիրած կերակուրը հողի կարմիր որդն է: Ձմեռը երբ հողերը ջրով յագեցած են, որդերը գետնին խորը պատասպարուելու տեղ չի գտնելով կ'ստիպուին վեր ելլել. եւ այն ատեն խլուրդը իր տրամադրութեան տակ մեծաքանակ եւ թարմ սնունդ գտնելով, կարելի չ'ըլլար դեղերով պատրաստուած որդերը հաւնեցնել անոր, եւ հետեւաբար ալ դժուար պայն ոչնչացնելը: Բայց երբ հողերուն վերի մասը կ'սկսի չորնալ, եւ գարնան արեւուն ճառագայթներէն կը տաքնայ, որդերն ալ կամաց կամաց հողին խորերը իջնելով, խլուրդը ուտելու որդ չի գտնել, եւ դեղով պատրաստուածները անյազարար կ'ուտէ այն ատեն: Այս հաշիւով, տարւոյն անձրեւոտ եղանակներուն մէջ պէտք չ'է երբեք փորձել խլուրդասպան դեղերը. եւ կատարեալ յաջողութեամբ համար, պէտք է գործել, մասնաւորապէս մարտ, ապրիլ կամ առաւելուն մայիս ամիսներուն մէջ երբ արդէն հողերը չոր եւ տաք են:

Փռանսաի մէջ, շատ դեղագործներ խլուրդասպան փոշի անունով դեղեր կը ծա-

խեն տուրիերու մէջ, ասոնք ուրիշ բան չ'են բայց եթէ, մկնդեղ (ալան օր), որ- ծընկոյղ (բարկապիտ), սպիտակ եղբորո- սի արմատ (բար օր կամ բարձա օր կամ բար շէպիւթի), սէնթինեասի բակլա (իֆադի- Բալաս), որոնք փոշիացնելով, եւ առանձինն կամ իրար խառնելով կը գործածեն վերը յիշուած եղանակով:

Միմիայն ործընկոյղը մկնդեղին հետ խառնելով, եւ որդերուն վրայ մալակունե- լով թէ որ գործածուի, խլորդները վար- կենապէս կայծակնահար կը սատկին:

Ղ. ԲՈԼՍ

ԱՌՏՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Առանց սակի լաւ փոփ մը ակուայ մաքրելու համար

Կերակուր ուտելէդ վերջ բնական է որ, անդեան մասնիկները ակուաներու ճեղ- քերուն մէջ մտնելով, կը մնան եւ կը բա- ղալուծուին հոն. ուրիշ յառաջ կուգայ բերնի գարշահոտութիւնը:

Եթէ ակուայ աղտէն քիչ մ'առնելով, ապակիի կտորի մը վրայ դնենք եւ ման- րադէտով նայինք, պիտի տեսնենք միլիո- նաւոր մանրէներ (ֆիթա), եւ մանաւանդ- ցպիկներ (պոլիթի, քիթի մը մանրէ): Այս ցպիկները շատ վնասակար են, անոնցմէ ոմանք, ակուաներու փտութիւնը կը փու- թացնեն, ոմանք ծանր հիւանդութեանց պատիւները (ֆիթա) կը զրգունեն, երբ մար- սողութեան մէջ մտնեն: Ուրեմն ակուա- ներու մաքրութիւնը անհրաժեշտ պէտք մ'է:

Շատեր թէ եւ կը փափաքին իրենց ակ- ուաները մաքրել, բայց ծախուած դեղե- րու սղութեան պատճառաւ, եւ կամ ո- մանք ալ չի գիտնալով անհոգ կը դըտ- նուին. մանաւանդ որ հրապարակի վրայ ծախուած կարգ մը ակուայ փոշիներ, ի- րենց մէջ կը պարունակեն վնասակար նիւ- թեր, որոնք թէ եւ լաւ կը մաքրեն ակուա- ները, բայց միեւնոյն անգամ ակուային վրայի արծնիկը (ալան) հալեցնելով, անոր տակի փղոսկրակերպ մասը երեւան կը հանեն, որ թեթեւ թթուներու ազդեցու-

թեան տակ իսկ շուտով կը փտին:

Ահաւասիկ միջոց մը, որ ֆրանսական թերթ մը կը յանձնարարէ, եւ որ ամեն ոք կրնայ ունենալ յիշապէս երբ որ ուզէ:

Փայտի մոխիր՝ որ կը ճերմկցնէ եւ ակ- ուաներն ալ փտութենէ կը պահպանէ, մի- եւնոյն անգամ հակաանխական ըլլալով:

Բաղալուծ մամբ (ալան) ապացուցուած է որ, այս մոխիրը իւր մէջ կը պարունակէ ակուայ մաքրելու օգտակար տարրեր: Ա- սիկա ամենէն աղէկն է: Սակայն եթէ դոնուին ոմանք, որ դրամի չի խնայելով, ուզեն անուշահոտ ակուայի փոշի մ'ունե- նալ, 'ի ստորեւ կը դնենք ուրիշ բաղադ- րութիւն մը որ ահաւասիկ.

Փայտի ածուխ	200 կում
Բնաքնաի փոշի	100 »
Հայ կաւ (իւլ երէն)	10 »
Կարմիր բուստ (ֆիթա)	12 »
Գինեմրուրի սերուց (ալան Գր- Գր)	10 »
Դարեճենեկի փոշի (Գրէն)	125 »
Անանուսի իսկութիւն (նաւե- րահ)	15 »
Սաթի երկնաջուր (Բէնդի- Գր)	2 »

Ասոնք լաւ մը փոշիացնելով, չարաթը 2—3 անգամ գործածելու է:

Մորթի ճեղկուտուի դեղ

Սառնեցէք իրար. վարդեջուր 100 կը- ուամ, քաղցիւղ (իւլ-Երէն) 20 կում, ա- ղաղ (Բէն) 1/2 կում. ձեռքերը, դէմքը կամ չրթուցները երբ ցուրտէն ճեղքը- տին, առաւօտ երեկոյ լաւ մը չփեցէք այս խառնուրդէն քանի մը կաթիլով:

ԱՐԱՔՍ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Խոնաւութենէ յառաջ եկած կաւաներու բիծերը մաքրելու համար

Այս բիծերը բոլորովին կ'անհետին հե- տեւեալ միջոցով: Պէտք է ապուրի դգալ մը աղ եւ դգալ (Խահաթի) մը անուշադ- րի քլորուկ (իշապէս Բալան) իրար խառնել,

եւ 2 ապուրի դգալ ջուրի մէջ լաւ մը հալեցնել: Քանի մ'անգամ այս խառնուրդով բիծերը ծեփենէդ վերջ, կտաւը փռեցէք, եւ քանի մը ժամ թողուցէք, յետոյ սովորական կերպով լուացէք: Խոնաւութենէ յառաջ եկած ամենէն հին բիծերն անգամ այս եղանակով կը մաքրուին:

Իւդոս Եփեսոս մաքրելու համար

Շիշին մէջ 100ին 10—15 բնածխատ նատրոն (soda) պարունակող տաքցած ջուր լեցուցէք. կէս ժամ յետոյ ուժով ցնցեցէք, թափեցէք մէջինը եւ մաքուր տաք ջրով ցողուցէք, վերջն ալ պաղ ջրով:

Ուրիշ միջոց մ'ալ. հաւասար չափով աղ եւ քացախ իրար խառնեցէք, լեցուցէք շիշին մէջ եւ ուժով ցնցեցէք. 1—2 անգամէն կատարելապէս կը մաքրուի:

ԱՐԱՔԱ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

ՓԻԼԻՊԻ. — Օր. Թ. Ա. — Ստացանք Մ. ի խմբագրութենէն բաժնեգինը, թերթերը կանոնաւորապէս կ'ստանաք:

ՋՄԻԻՌՆԻԱ. — Կ. Մ. — Կ'ստանաք առաջին թիւէն:

ԳԱՀԻՐԵ. — Ստացանք նամակնիդ:

ԼՕՄ-ԲԱԼԱՆՈՒԱ. — Ա. Խ. — Թերթերը կ'ստանաք. ստացանք Բիւլետենի խմբագրատունէն Ձեր քարթը:

ՊԱՆՏՐՄԱ. — Ա. Մ. — Ստացանք. թերթերը կը դրկուին, չնորհակալութիւն Ձեր զգացմանց:

ԻՋՄԻՏ. — Յ. Չ. — Ստացանք. նամակնոդ պատասխանը կ'ստանաք:

ՊՈՒՐՍԱ. — Ստացանք 50 դրուչ. թերթերը կ'ստանաք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՔ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Թիւ 4. — Պ. Վ. Փափագեան. — Խոնաւոցի աղտոտ ջուրերը (սոսնալէն ջուր)

իրենց մէջ բոյսերու համար օգտակար տարրեր կը պարունակեն, եւ չատ անգամ զօրաւոր աղբի չափ ալ ազդեցութիւն ունին. կրնաք զանոնք օգտակարապէս գործածել ձեր բուրաստանին մէջ իրր շէշ, բայց ոչ տունկերը ջրելու համար. որովհետեւ՝ երբ դուք ծարաւնաք. ջուրի տեղ օղի չ'էք խմեր անշուշտ:

Աղբերու եւ իրենց գործածութեան վրայ մօտերս պիտի գրուի:

Թիւ 6 — Իզմիտ Յ. Չ. — Մլուկը, ուրկէ յառաջ կուգայ Ինչէ կաճի եւ ինչով կը մաքրուի: Ձեր պատասխանը տեսէք էջ 72:

Թիւ 7 — Պրուսա Լ. Մ. — Շերամաբուծութեան մասին տեղեկութիւններ ուզած էք, այո՛ թէ եւ մինչեւ այսօր սկսիլ կ'ուզէինք այդ խիստ կարեւոր խնդրոյն վրայ դրել, բայց մեր յարգոյ աշխատակցին ճամբորդութեան պատճառով ետ մընաց, սակայն խմբագրութիւնս որոշած է իր կողմէ գրել շերամաբուծական յօդուածներ ինչ որ պիտի տեսնէք յաջորդ թիւին մէջ:

Պրուսա — Ա. Ս. — Նոյն պատասխանը Ձեզ ալ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ապրիլ 12 Նոր Կիւրակէի օրը թատերական չքեղ ներկայացում մը տեղի պիտի ունենայ Բերա, 'ի նպատ Զորից Թաղից Աղքատախնամին Դուռ-գարուի: Ներկայացուիլիք խաղն է Երկու Որբուհիք: Մանրամասնութիւնք մեր յառաջիկայ թրուով պիտի ծանուցանենք: Ամեն կերպով կը յուսանք որ հասարակութիւնը լաւ ընդունելութիւն պիտի ընէ Աղքատախնամի ջանքերուն որ գիշեր ցորեկ կ'աշխատի հարիւրաւոր աղքատ հիւանդներու օգտին:

ԱՐՏՈՆԱՏԵՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵՍԱՆ

Որ 25 տարիներէ ի վեր զինուորական և քաղաքային հիւանդանոցներու մէջ պաշտօն վարած է, պատիւ ունի ծանուցանել թէ այս անգամ իւր բնակութիւնը հաստատած է Գատը-Գիւղ Պատէմ փողոց, Թիւ 12. ուր հիւանդ կ'ընդունուի ամէն օր, ի մասնաւորի աչքի հիւանդութեանց. իսկ Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը կը գտնուի Հայոց եկեղեցւոյ դիմաց Չպուրճեան Լեւոն էֆէնտիի հանրածանօթ Դեղարանը, և հոն իրենց դիմող աղքատ հիւանդները ձրի կը գտնանէ:

7-10

ՄԼՈՒԿՆԵՐԷ ՄԻ ՉԱՐՉԱՐՈՒԻՔ

Մլուկները որ շատ աւելի կը գտնուին Գում-Գաբուի կողմերը, սկսած են իրենց անտանների ներկայութեամբ պատուել:

Մի նեղուիք,

Դիմեցէք Խաչիկ Ֆէսճեանի դեղարանը, Լանկա Սլաճա Մէսճիտ Թիւ 9, հոն պիտի գտնէք մլուկի փոշի քաղմ, և միանգամայն ամէն գրպանի դիւրամատչելի:



ՄԵՍ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

1. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Մ. ԻՄԻՐՁԷ

Կ. Պոլիս Ֆնսֆեան խանի տակ թիւ 3

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ ամէն տեսակ թարմ դեղօրայք. վիրաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ

մթերք մը, յարմար գներով: Լ. Ապլանեան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացնելու համար, մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն դեղօրայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Չարածճի մլուկներու և լուերու ելն. համար միջատասպան փոշի Poudre insecticide մեծ ու քանակ բերել տուած են ուղղակի ծաւնացիւցէն, որուն համար մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք յարգոյ հասարակութեան:



ՀՈՆԿ-ՔՈՆԿ-ՍԷՅԼԱՆ-Կ ՊՈՒԼԻՍ

ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղալ Պէյ խանի դրան կից. թիւ 10

Ամենէն լաւ թէյերու ամենէն ընդարձակ վաճառատունը Կ. Պոլսոյ մէջ, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառներու յանձնարարութիւնները փութով և խնամով կը կատարուին:

Ջինական, Հնդկական, Ճափայի և Սէյլանի էն աղնիւ թէյերն ուղղակի բերուած, կը գտնուին հոն:

Չգուշանալ սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Ստորագրութիւնը:

